ՄԱԿՄԻԼԱՆ ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
MACMILLAN ARMENIA PUBLISHING HOUSE

Ղ.Փարպեցու 9, Երևան 375002, Հայաստան
tel: (3741) 53-79-82, 63-79-83
email: pmacmill@arminco.com

Gh.Parpetsy 9, Yerevan 375002, Armenia
fax: (3741) 537 991
www. macmillanarmenia.am

10 հունվարի 2008

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՄԱԿՄԻԼԱՆ-ԱՐՄԵՆԻԱ ՀԶ ՓԲԸ հրատարակչությունը, ի դեմս Հրատարակչական տնօրեն Ռուբեն Աղայանի, տեքստում այսուհետև Հրատարակիչ, մի կողմից, և «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի նկարների հեղինակը, ի դեմս Խորեն Հակոբյանի, տեքստում այսուհետև Հեղինակ, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են հետևյալի մասին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Հեղինակի ստեղծած «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուն:

2. Հեղինակը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել հեղինակային նյութերը, որոնք իրենց ամբողջության մեջ պետք է համապատասխանեն Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Հեղինակային նյութերն ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորվում է կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքներն իր հաշվին:

4. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն է:

5. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի հեղինակային իրավունքը պատկանում է Հեղինակին:

6. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի հրատարակչական իրավունքը պատկանում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի հեղինակային նյութերը տրամադրել որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար:

## ՄԱՄՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են համագործակցել 2008 թթ. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի հրատարակման գործում:

8. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի վերջնական և ավարտուն տարբերակը պետք է հանձնվի Հրատարակչին մինչև 2008թ. փետրվարի 15-ը:

9. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուն ներառում է հետևյալ գրողների դիմանկարները.

1. Սայաթ-Նովա
2. Խաչատուր Աբովյան
3. Ռաֆայել Պատկանյան
4. Միքայել Նալբանդյան
5. Պետրոս Դուրյան
6. Գաբրիել Սունդուկյան
7. Րաֆֆի
8. Հակոբ Պարոնյան
9. Ծիրվանզադե
10. Մուրացան
11. Նար-Դոս
12. Գրիգոր Զոհրապ
13. Միսաք Մեծարենց
14. Սիամանթո
15. Դանիել Վարուժան
16. Հովհաննես Թումանյան
17. Ավետիք Իսահակյան
18. Լևոն Շանթ
19. Երվանդ Օտյան
20. Վահան Տերյան
21. Եղիշե Չարենց
22. Դերենիկ Դեմիրճյան
23. Ակսել Բակունց
24. Ստեփան Զորյան
25. Վահան Թոթովենց
26. Գուրգեն Մահարի
27. Նաիրի Զարյան
28. Համաստեղ
29. Հակոբ Օշական
30. Շահան Շահնուր
31. Կոստան Զարյան
32. Խաչիկ Դաշտենց

33. Մուշեղ Գալշոյան
34. Սերո Խանզադյան
35. Հրանտ Մաթևոսյան
36. Սիլվա Կապուտիկյան
37. Հովհաննես Շիրազ
38. Համո Սահյան
39. Պարույր Սևակ

10. «Հայ գրողների դիմանկարներ» ժողովածուի հրատարակության համար Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին հեղինակային վարձատրություն (ռոյալտի) 510 (հինգ հարյուր տասը հազար) դրամ:

11. Հեղինակային վարձատրություն (ռոյալտի) Հեղինակին վճարվելու է ապրիլի 20-30-ը:

12. Հետագա հնարավոր վերահրատարակությունների դեպքում հեղինակային վարձատրություն (ռոյալտի) չի նախատեսվում:

13. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով վճարվելիք հարկերի նվազեցումով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ եթե բանակցությունները արդյունք չեն տալիս՝ դատական կարգով:

15. Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, երկուսն էլ օժտված հավասարազոր իրավաբանական ուժով կողմերի շահերը ներկայացնելու համար վիճաբանական իրադրություններում:

## ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

**ՄԱԿՄԻԼԱՆ-ԱՐՄԵՆԻԱ ՀՁ ՓԲԸ**
Երևան, Ղ.Փարպեցու 9
ՀՎՀՀ 02533144

ՌՈՒԲԵՆ ԱՂԱՅԱՆ
Հրատարակչական տնօրեն

**ՀԵՂԻՆԱԿ**
անձնագրի համար AA 0622178
005, 04.10.1996
Ծնվ. 22. ապրիլ 1945
Երևան, Լփովյան 13, բն. 43

ԽՈՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղ. Երևան
Երկու հազար ինը թվականի մարտի հինգին

*Պետական գնումների գործակալության ՊԳԳ–ԱՇՁՊ–09/18 մրցույթին մասնակցելու և դասագրքերի ձեռագրեր ներկայացնելու նպատակով համագործակցության մասին*

«Մակմիլան-Արմենիա» ՀՁ Փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Դ. Փարպեցու փող., 9 շենք, բնակարան 7) ի դեմս տնօրեն Ալա Հարությունյանի, որի կողմից 10.02.2009թ. հաստատված թիվ 7 լիազորագրով գործում է Միհրան Անդրանիկի Բարսեղյանը, ծնված 28.07.1970թ., հաշվ. քաղ. Երևան, Օրբելի փող., տասներկու (12) շենք, բնակարան քսանութ (28), անձնագիր՝ AH 0210065 տրված 01.06.2006թ. կող 004, հետագայում «Հրատարակիչ», մի կողմից, և (ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի «Հայոց լեզու 10», «Հայոց լեզու 11», «Հայոց լեզու 12» դասագրքերի) հեղինակային խումբը, ի դեմս Լյովիկ Կորյունի Եզեկյանի, ծնված 19.07.1941թ., անձնագիր AC 0628153 տրված 08.01.1999թ. 011-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Այգեստան 9 (ինը) փող., վաթսունյոթ (67) շենք, բնակարան քսանյոթ (27), Արտաշես Լիպարիտի Սարգսյանի, ծնված 22.10.1973թ., անձնագիր AC 0659643 տրված 26.01.1999թ. 004-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Ազատության պող., երեք կոտորակ մեկ (3/1) շենք, բնակարան քսանհինգ (25), Ռուբեն Սաքապետոյանի, ծնված 11.10.1944թ., անձնագիր AB 0298459 տրված 11.02.1997թ. 006-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Սունդուկյան փող., տասնհինգ (15) շենք, բնակարան երկու (2), հետագայում «Համահեղինակներ», մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են 2009–2011 ուսումնական տարիների Հայաստանում ավագ դպրոցի դասագրքերի ստեղծման և ՊԳԳ–ԱՇՁԲ-09/18 մրցույթին մասնակցելու նպատակով համագործակցության մասին, հետագայում « Կողմեր », կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և ՀՀ ՊԳԳ-ի հետ կնքվելիք պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Համահեղինակների ներկայացրած դասագրքերը:

2. Համահեղինակները պարտավորվում են սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել իրենց հեղինակային նյութը, որը պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Համահեղինակներն իրենց աշխատանքային նյութը Հրատարակչին են ներկայացնում մեքենագիր տեսքով, 2 օրինակից, խմբագրված և ավարտուն հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

4. Համահեղինակները երաշխավորում են, որ Հրատարակչին ներկայացրած դասագրքերը լիովին ինքնուրույն է, չի կրկնում որևէ այլ հեղինակի հեղինակային նյութ, չի պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Համահեղինակները պատասխանատու են այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած գործողությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսերը):

5. Համահեղինակները պարտավոր են իրենց հեղինակային նյութը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

5.1. Եթե հեղինակային նյութը չի համապատասխանում Հրատարակչի սկզբունքային պահանջներին, Հրատարակիչը իրավասու է լուծել պայմանագիրը, իսկ Համահեղինակները պարտավոր են վերադարձնել Հրատարակչին ստացած հեղինակային վարձատրության (ռոյալտի) կանխավճարը, եթե այդպիսին եղել է:

6. Հեղինակային նյութն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավորվում է կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքներն իր հաշվին:

6.1. Հրատարակիչն այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջելու Համահեղինակներից կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ հեղինակային նյութի մեջ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով և Պետական գնումների գործակալության մրցույթի պայմաններով:

6.2. Համահեղինակները հրատարակչական աշխատանքների ընթացքում նույնպես իրավունք ունեն իրենց հեղինակային նյութի մեջ փոփոխություններ մտցնելու, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի Հրատարակչի ընդհանուր հրատարակչական ծախսերի 10 տոկոսը: Դրանից ավելի մեծ ծախսերի հետ կապված փոփոխությունների հետևանքով Հրատարակչի կորցրած գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

7. Եթե Համահեղինակների ներկայացրած հեղինակային նյութի տեքստը լեզվական առումով արմատական խմբագրության կարիք ունի, ապա Հրատարակիչը վարձում է անկախ խմբագրի, որին տրվող վարձատրության գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

8. Համահեղինակները իրավունք ունեն իրենց դիտողությունները հայտնելու Հրատարակչի առաջարկած ձևավորման և նկարազարդման (դիզայն և իլյուստրացիա) վերաբերյալ: Բայց այդ աշխատանքները սկսվելուց հետո, Համահեղինակները իրավունք չունեն պահանջելու ձևավորողի կամ նկարչի փոփոխություն, կամ պետք է իրենց հեղինակային վարձատրության (ռոյալտի) հաշվին փոխհատուցեն այդ փոփոխության պատճառով Հրատարակչի կրած նյութական վնասները:

8.1. Նկարչական և իլյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ անձանց տրվելու ենթակա չեն, դրանք կատարողներին չեն վերադարձվում:

9. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո, հեղինակային նյութերի առաջին ընթերցումը կատարում են Համահեղինակները:

9.1. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների մեջ:

10. Գրքի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն է:

11. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի հեղինակային իրավունքը պատկանում է Համահեղինակներին: Հրատարակիչը իրավունք չունի թարգմանելու, տարածելու դրանք գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով (բացառությամբ տպագրականի)՝ առանց Համահեղինակների գրավոր համաձայնության:

11.1. Սույն պայմանագրի առարկա դասագրքերը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու (ամբողջովին, հատվածաբար կամ թարգմանաբար) իրավունքը այլ հրատարակչություններին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին վաճառքի ընդհանուր գնի 20 տոկոսը:

12. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակներն իրավունք չունեն տրամադրելու դասագրքերի նյութերը որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

13. Հեղինակային իրավունքի փոխանցումը սույն պայմանագրի առարկա դասագրքերի նկատմամբ կատարվում է 10 (տասը) տարի ժամկետով:

Սակայն հինգ (հինգ) տարի անընդմեջ սույն պայմանագրի առարկա դասագրքերի վերատպություն չիրականացնելու դեպքում, հեղինակային իրավունքի փոխանցումը կասեցվում է և Համահեղինակները կարող են իրենց հայեցողությամբ փոխանցել այն ցանկացած այլ Հրատարակչի:

14. Հեղինակային իրավունքի փոխանցման ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Համահեղինակները պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարենպաստության սկզբունքով:

15. Հեղինակային իրավունքին վերաբերող պայմանավորվածություններից (հոդված 11; 12; 13; իրենց ենթակետերով) յուրաքանչյուրից որևէ մեկը խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ, որի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ վճռում է դատարանը:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պայմանավորվում են համագործակցել 2009–2011 ուսումնական տարիների Հայաստանի ավագ դպրոցի դասագրքերի հրատարակման Պետական գնումների գործակալության մրցույթին մասնակցելու մասին:

17. Համագործակցությունն ընդգրկում է տասներկուամյա ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի «Հայոց լեզու 10» 10-րդ, «Հայոց լեզու 11» 11-րդ և «Հայոց լեզու 12» 12-րդ դասարանների դասագրքերի ստեղծումը:

18. Համահեղինակները պարտավորվում են դասագրքերի բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշչին, ուսումնական ծրագրին ու ժամաքանակին:

19. Հրատարակիչը պարտավորվում է ձեռագրերը ստանալուց հետո տասը օրվա ընթացքում Համահեղինակների հետ քննարկման ներկայացնել շարվածքի և ձևավորման նախնական տարբերակը:

20. «Հայոց լեզու 10» դասագրքի 60%-ի, «Հայոց լեզու 11» դասագրքի 30%-ի և «Հայոց լեզու 12» դասագրքի 20%-ի վերջնական տարբերակները ՊԳԳ-ի մրցույթին ներկայացնելու համար պետք է հանձնվեն Հրատարակչին մինչև 2009թ. մարտի 9-ը:

20.1. Մրցույթում շահելու դեպքում «Հայոց լեզու 10» 10-րդ դասարանի դասագրքի ավարտուն տարբերակը պետք է հանձնվի Հրատարակչին մինչև 2009թ. ապրիլի 25-ը, «Հայոց լեզու 11» 11-րդ դասարանի դասագրքի ավարտուն տարբերակը 2009թ. հոկտեմբերի 15-ը, «Հայոց լեզու 12» 12-րդ դասարանի դասագրքի ավարտուն տարբերակը 2010թ. հոկտեմբերի 15-ը:

21. Մրցույթում շահելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին «Հայոց լեզու 10», «Հայոց լեզու 11» և «Հայոց լեզու 12» դասագրքերի համար հեղինակային վարձատրության (ռոյալտի) լրիվ տպաքանակի Հրատարակչի վաճառքի գնի տասնհինգ (15) տոկոսին համապատասխան գումար:

«Հայոց լեզու 10» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2009թ. հոկտեմբերի 15-ին:

«Հայոց լեզու 11» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2010թ. հոկտեմբերի 15-ին:

«Հայոց լեզու 12» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2011թ. հոկտեմբերի 15-ին:

21.1. Հրատարակիչը պարտավորվում է կանխավճարային կարգով մինչև 2009թ. մարտի 10-ը վճարում կատարել Համահեղինակներին հինգ հարյուր հազար (500 000) ՀՀ դրամ «Հայոց լեզու 10», «Հայոց լեզու 11», «Հայոց լեզու 12» դասագրքերի համար:

Մրցույթում պարտվելու դեպքում, այդ գումարը Հրատարկչին չի վերադարձվում: Մրցույթը շահելու դեպքում այդ գումարը համարվում է կանխավճար և մտցվում է սույն պայմանագրով նախատեսված հեղինակային վարձատրության (ռոյալտի) ընդհանուր գումարի մեջ:

21.2. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

21.3. Հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) բաշխվում է հեղինակային խմբի անդամների միջև հավասար չափով:

22. Մրցույթում հաղթած դասագրքերի հետագա վերահրատարակությունների ժամանակ Հրատարակիչը Համահեղինակներին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի) վերահրատարակման տպաքանակին համապատասխան Հրատարակչի վաճառքի գնի տասներկու (12) տոկոսի չափով:

22.1. Դասագրքերի վերահրատարակման ժամկետները և տպաքանակը որոշում է Հրատարակիչը: Վերահրատարակությունն իրականացնելու համար Համահեղինակներից հատուկ թույլտվություն չի պահանջվում, սակայն Հրատարակիչը պետք է Համահեղինակների հետ քննարկի դասագրքերի հնարավոր մասնակի բարեփոխումների հարցը:

23. Անկախ դասագրքերի հրատարակման տպաքանակից Համահեղինակներին անվճար հատկացվում է ինը (9) օրինակ դասագիրք:

24. Մրցույթի համար պատրաստվող դասագրքերի ցանկացած հատվածի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակները իրավունք չունեն դասագրքերը ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնելու այլ անձանց:

25. Համահեղինակները ՊԳԳ-ի մրցույթին պատրաստվող և սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերը կազմելիս պարտավորվում են չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ նույն խմբաքանակի համար նախատեսվող դասագրքերի ստեղծման նպատակով:

26. Հեղինակային խմբի անդամների ազգանունները դասագրքերի շապիկի ու տիտղոսաթերթի վրա տրվում են այբբենական կարգով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27.Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում, վեճերը և տարաձայնությունները լուծվում են դատական կարգով:

28. Պայմանագիրը կնքված է չորս հավասարազոր օրինակներից, որից մեկ օրինակը պահվում է Կենտրոն նոտարական տարածքում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ

1.

2.

3.

Երկու հազար ինը թվականի մարտի հինգին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում h. 1582

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի և Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՏԱՐ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղ. Երևան

Երկու հազար տասներկու թվականի մայիսի քսաներեքին

**ՀՀ ԿԳՆ-ի և Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու և դասագրքերի ձեռագրեր ներկայացնելու նպատակով համագործակցության մասին**

«ՄԱՆՄԱՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Ղ. Փարպեցու փող.,ինը / 9/ շենք, բնակարան յոթ /7/, ի դեմս տնօրեն Ալա Հարությունյանի, որի կողմից 05.05.2012թ. հաստատված թիվ 011 լիազորագրով գործում է Միհրան Անդրանիկի Բարսեղյանը, ծնված 28.07.1970թ., հաշվառված քաղ. Երևան, Օրբելի փող., տասներկու (12) շենք, բնակարան քսանութ (28), անձնագիր՝ AH 0210065 տրված 01.06.2006թ. 004-ի կողմից, հետագայում «Հրատարակիչ», մի կողմից, և խմբաքանակ 1-ի («Հայրենագիտություն 5», «Հայրենագիտություն 5: ՈւՁ») դասագրքի և ձեռնարկի հեղինակային խումբը, ի դեմս Արմեն Աշոտի Հովսեփյանի, ծնված 14.04.1972թ., անձնագիր՝ AH0506250, տրված 15.10.2007թ. 005-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Մոլդովական փող. քսանյոթ (27) շենք, բնակարան հազար յոթ հարյուր մեկ, հազար յոթ հարյուր երկու (1701, 1702), Առաքել Վազգենի Գյուլբուդաղյանի, ծնված 03.11.1957թ., անձնագիր՝ AM 0312226, տրված 25.05.2011թ. 011-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Մաշտոցի պ., շենք յոթ (7), բնակարան քսանվեց (26) և Նաիրա Սուրենի Տողանյանի, ծնված 06.05.1964թ., անձնագիր՝ AM 0270407, տրված 19.04.2011թ. 010-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Վարդանանց փող., տուն ութսունինը (89), հետագայում «Համահեղինակներ» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են 2013–2014 ուսումնական տարվա Հայաստանում հանրակրթական դպրոցի դասագրքերի ստեղծման և 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու նպատակով համագործակցության մասին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և ԴՇՀ-ի հետ կնքվելիք պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Համահեղինակների ներկայացրած դասագրքերը:

2. Համահեղինակները պարտավորվում են սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել իրենց հեղինակային նյութը, որը պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Համահեղինակներն իրենց աշխատանքային նյութը Հրատարակչին են ներկայացնում մեքենագիր տեսքով, 2 օրինակից, խմբագրված և ավարտուն հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

4. Համահեղինակները երաշխավորում են, որ Հրատարակչին ներկայացրած դասագրքերը լիովին ինքնուրույն են, չեն կրկնում որևէ այլ հեղինակի հեղինակային նյութ, չեն պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Համահեղինակները պատասխանատու են այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած գործողությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսերը):

5. Համահեղինակները պարտավոր են իրենց հեղինակային նյութը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

5.1. Եթե հեղինակային նյութը չի համապատասխանում Հրատարակչի սկզբունքային պահանջներին, Հրատարակիչը իրավասու է լուծել պայմանագիրը, իսկ Համահեղինակները պարտավոր են վերադարձնել Հրատարակչին ստացած հեղինակային վարձատրության (ռոյալտի) կանխավճարը, եթե այդպիսին եղել է:

6. Հեղինակային նյութն ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորում է իր հաշվին կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքները:

6.1. Հրատարակիչն այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջելու Համահեղինակներից հեղինակային նյութի մեջ կատարելու որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով և 2012-ԴՇՀ մրցույթի պայմաններով:

6.2. Համահեղինակները հրատարակչական աշխատանքների ընթացքում նույնպես իրավունք ունեն իրենց հեղինակային նյութի մեջ փոփոխություններ մտցնելու, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի Հրատարակչի ընդհանուր հրատարակչական ծախսերի 10 տոկոսը: Դրանից ավելի մեծ ծախսերի հետ կապված փոփոխությունների հետևանքով Հրատարակչի կորցրած գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

7. Համահեղինակներն իրավունք ունեն իրենց դիտողությունները հայտնելու Հրատարակչի առաջարկած ձևավորման և նկարազարդման (դիզայն և իլյուստրացիա) վերաբերյալ: Բայց այդ

աշխատանքները սկսվելուց հետո, Համահեղինակները իրավունք չունեն պահանջելու ձևավորողի կամ նկարչի փոփոխություն, կամ պետք է իրենց հեղինակային վարձատրության (ռոյալտի) հաշվին փոխհատուցեն այդ փոփոխության պատճառով Հրատարակչի կրած նյութական վնասները:

7.1. Նկարչական և իլյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ անձանց տրվելու ենթակա չեն, դրա կատարողներին չեն վերադարձվում:

8. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո, հեղինակային նյութերի առաջին ընթերցումը կատարում են Համահեղինակները:

8.1. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների մեջ:

9. Գրքի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն են:

10. Սույն պայմանագրի առարկա դասագրքի և ձեռնարկի հեղինակային իրավունքը պատկանում է Համահեղինակներին: Հրատարակիչն իրավունք չունի թարգմանելու, տարածելու դրանք գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով (բացառությամբ տպագրականի)՝ առանց Համահեղինակների գրավոր համաձայնության:

10.1. Սույն պայմանագրի առարկա դասագիրքը և ձեռնարկը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու (ամբողջովին, հատվածաբար կամ թարգմանաբար) իրավունքը այլ հրատարակչություններին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին վաճառքի ընդհանուր գնի 20 տոկոսը:

11. Սույն պայմանագրի առարկա դասագրքի և ձեռնարկի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակներն իրավունք չունեն տրամադրելու դասագրքերի նյութերը որևէ այլ հրատարակչության, ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

12. Հեղինակային իրավունքի փոխանցումը սույն պայմանագրի առարկա դասագրքի և ձեռնարկի նկատմամբ կատարվում է 10 (տասը) տարի ժամկետով:

13. Հեղինակային իրավունքի փոխանցման ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Համահեղինակները պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարեխղճության սկզբունքով:

14. Հեղինակային իրավունքին վերաբերող պայմանավորվածություններից (հոդված 10; 11; 12; իրենց ենթակետերով) յուրաքանչյուրից որևէ մեկը խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ, որի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության չկայանալու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պայմանավորում են համագործակցել 2013–2014 ուսումնական տարվա Հայաստանի հանրակրթական դպրոցի դասագրքերի հրատարակման 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու մասին:

16. Համագործակցությունն ընդգրկում է հանրակրթական դպրոցի «Հայրենագիտություն 5», «Հայրենագիտություն 5: ՈՒՁ» 5-րդ դասարանի դասագրքի և ձեռնարկի ստեղծումը:

17. Համահեղինակները պարտավորվում են դասագրքի բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշչին, ուսումնական ծրագրին ու ժամաքանակին:

18. «Հայրենագիտություն 5» դասագրքի 100%-ի, «Հայրենագիտություն 5: ՈՒՁ» ձեռնարկի 100%-ի վերջնական տարբերակները, ԴՇՀ-ի մրցույթին ներկայացնելու համար, պետք է հանձնվեն Հրատարակչին մինչև 2012թ. հուլիսի 31-ը:

19. Մրցույթում շահելու դեպքում ,Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին «Հայրենագիտություն 5», «Հայրենագիտություն 5: ՈՒՁ» դասագրքի և ձեռնարկի համար Հրատարակչի վաճառքի գնի տասնհինգ (15) տոկոսին համապատասխան գումար:

«Հայրենագիտություն 5», «Հայրենագիտություն 5: ՈՒՁ» դասագրքի ու ձեռնարկի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2013թ. հոկտեմբերի 30-ը:

19.1. Հրատարակիչը պարտավորվում է կանխավճարային կարգով, մինչև 2012թ. մայիսի 25-ը, վճարում կատարել Հեղինակին մեկ միլիոն (1 000 000) ՀՀ դրամ, «Հայրենագիտություն 5», «Հայրենագիտություն 5: ՈՒՁ» 5-րդ դասարանի դասագրքի և ձեռնարկի համար:

19.2. Մրցույթում պարտվելու դեպքում, այդ գումարը Հրատարկչին չի վերադարձվում. Մրցույթը շահելու դեպքում, այդ գումարը համարվում է կանխավճար և մտցվում է սույն պայմանագրով նախատեսված հեղինակային վարձատրության (ռոյալտի) ընդհանուր գումարի մեջ:

19.3. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

20. Հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) բաշխվում է հեղինակային խմբի անդամների միջև, հավասար չափով:

21. Մրցույթում հաղթած դասագրքի հետագա վերահրատարակությունների ժամանակ, Հրատարակիչը, Համահեղինակներին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի)

վերահրատարակման տպաքանակին համապատասխան. Հրատարակչի վաճառքի գնի տասը (10) տոկոսի չափով:

21.1. Դասագրքի վերահրատարակման ժամկետները և տպաքանակը (ելնելով ԴԸՀ-ի պատվերից) որոշում է Հրատարակիչը: Վերահրատարակությունն իրականացնելու համար Համահեղինակների հատուկ թույլտվություն չի պահանջվում, սակայն Հրատարակիչը պետք է Համահեղինակների հետ քննարկի դասագրքերի հնարավոր մասնակի բարեփոխումների հարցը:

22. Մրցույթի համար պատրաստվող դասագրքի ցանկացած հատվածի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակները իրավունք չունեն դասագրքերը ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնելու այլ անձանց:

23. Համահեղինակները ԴԸՀ-ի մրցույթին պատրաստվող և սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերը կազմելիս պարտավորվում են չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ, նույն խմբաքանակի համար նախատեսվող դասագրքերի ստեղծման նպատակով:

24. Հեղինակային խմբի անդամների ազգանունները դասագրքի և ձեռնարկի շապիկի ու տիտղոսաթերթի վրա տրվում են հետևյալ հերթականությամբ.

«Հայրենագիտություն 5» Ա. Հովսեփյան
Ա. Գյուլբուդաղյան
Ն. Տողանյան

«Հայրենագիտություն 5: ՈՒՁ» Ն. Տողանյան
Ա. Հովսեփյան
Ա. Գյուլբուդաղյան

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

25. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

26. Պայմանագիրը կնքված է չորս հավասարազոր օրինակներից, որից մեկ օրինակը պահվում է Կենտրոն նոտարական տարածքում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝

«ՄԱՆՄԱՐ»
«MANMAR»
02533144

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

Ա. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ա.Վ. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

Ն. Ս. ՏՈՂԱՆՅԱՆ

Երկու հազար տասներկու թվականի մայիսի քսաներեքին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի
նոտար Նունե Սարգսյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում հ. 2654

Գանձված է պետական տուրք և
ծառայության վճար համաձայն ՀՀ
«Պետական տուրքի և Նոտարիատի
մասին» օրենքների

ՆՈՏԱՐ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

քաղ. Երևան
Երկու հազար տասնմեկ թվականի մարտի իննին

ՀՀ ԿԳՆ-ի և Դասագրքերի շրջանառու հիմնադրամի 2011 – ԴՇՀ մրցույթին մասնակցելու և դասագրքերի ձեռագրեր ներկայացնելու նպատակով համագործակցության մասին

«ՄԱՆՄԱՐ » Փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Դ. Փարպեցու փող., 9 շենք, բնակարան 7) ի դեմս տնօրեն Ալա Հարությունյանի, որի կողմից 02.03.2011 թ. տրված թիվ Դ14 լիազորագրով գործում է Միհրան Անդրանիկի Բարսեղյանը, ծնված 28.07.1970թ., հաշվառված քաղ. Երևան, Օրբելի փող., տասներկու (12) շենք, բնակարան քսանութ (28), անձնագիր՝ AH 0210065 տրված 01.06.2006թ. 004-ի կողմից, հետագայում «Հրատարակիչ»,մի կողմից, և խմբաքանակ 7-ի («Մաթեմատիկա 5», «Մաթեմատիկա 6» «Մաթեմատիկա 5-6 Ուսուցչի ձեռնարկ») դասագրքերի և հեղինակային խումբը, ի դեմս Բորիս Սերգեյի Նահապետյանի, ծնված 05.03.1946թ., անձնագիր՝ AM 0208739 տրված 16.02. 2011թ. 010-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Այգեստան ինը (9) փող., վաթսունինը (69) շենք, բնակարան երկու (2) և Աշոտ Սերգեյի Աբրահամյանս, ծնված 23.09.1954թ., անձնագիր AE 0422870 տրված 09.06.1999թ. 012-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգվածէ մինչև 09.06.2014թ. հաշվառված քաղ. Երևան, Ֆուչիկի փող., քսանհինգ (25) շենք, բնակարան տասնինը (19), հետագայում «Համահեղինակներ» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են 2011–2013 ուսումնական տարիների Հայաստանում միջին դպրոցի դասագրքերի ստեղծման և ԴՇՀ - 2011 մրցույթին մասնակցելու նպատակով համագործակցության մասին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և Դասագրերի շրջանառու հիմնադրամի (ԴՇՀ) հետ, կնքվելիք պայմանագրով, նախատեսված տպաքանակով, լույս ընծայել Համահեղինակների ներկայացրած դասագրքերը:

2. Համահեղինակները պարտավորվում են, սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել իրենց հեղինակային նյութը, որը պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Համահեղինակներն իրենց աշխատանքային նյութը, Հրատարակչին են ներկայացնում մեքենագիր տեսքով, 2 օրինակից, խմբագրված և ավարտուն հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

4. Համահեղինակները երաշխավորում են, որ Հրատարակչին ներկայացրած դասագրքերը լիովին ինքնուրույն են, չեն կրկնում որևէ այլ հեղինակի հեղինակային նյութ, չեն պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում, Համահեղինակները պատասխանատու են այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած գործողությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսերը):

5. Համահեղինակները պարտավոր են իրենց հեղինակային նյութը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

5.1. Եթե հեղինակային նյութը չի համապատասխանում Հրատարակչի սկզբունքային պահանջներին, Հրատարակիչը իրավասու է լուծել պայմանագիրը, իսկ Համահեղինակները պարտավոր են վերադարձնել Հրատարակչին ստացած հեղինակային վարձատրության (ռոյալտի) կանխավճարը, եթե այդպիսին եղել է:

6. Հեղինակային նյութն ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորում է իր հաշվին կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքները:

6.1. Հրատարակիչն, այդ աշխատանքների ընթացքում, իրավունք ունի պահանջելու Համահեղինակներից, կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով և Դասագրքերի շրջանառու հիմնադրամի մրցույթի պայմաններով:

6.2. Համահեղինակները՝ հրատարակչական աշխատանքների ընթացքում, նույնպես իրավունք ունեն իրենց հեղինակային նյութի մեջ փոփոխություններ մտցնելու, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի Հրատարակչի ընդհանուր հրատարակչական ծախսերի 10 տոկոսը: Դրանից ավելի մեծ ծախսերի հետ կապված փոփոխությունների հետևանքով Հրատարակչի կորցրած գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

7. Եթե Համահեղինակների ներկայացրած հեղինակային նյութի տեքստը լեզվական առումով արմատական խմբագրության կարիք ունի, ապա Հրատարակիչը վարձում է անկախ խմբագրի, որին տրվող վարձատրության գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

8. Համահեղինակներն իրավունք ունեն իրենց դիտողությունները հայտնելու Հրատարակչի առաջարկած ձևավորման և նկարազարդման (դիզայն և իլյուստրացիա) վերաբերյալ: Այդ աշխատանքները սկսվելուց հետո, Համահեղինակներն իրավունք չունեն պահանջելու ձևավորողի կամ նկարչի փոփոխություն, կամ պետք է իրենց հեղինակային վարձատրության (ռոյալտի) հաշվին փոխհատուցեն այդ փոփոխության պատճառով Հրատարակչի կրած նյութական վնասները:

8.1. Նկարչական և ինյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ անձանց տրվելու ենթակա չեն, դրա կատարողներին չեն վերադարձվում:

9. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո, հեղինակային նյութերի առաջին ընթերցումը կատարում են Համահեղինակները:

9.1. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների մեջ:

10. Գրքի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն են:

11. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի և ձեռնարկի հեղինակային իրավունքը պատկանում է Համահեղինակներին: Հրատարակիչը իրավունք չունի թարգմանելու, տարածելու դրանք գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով (բացառությամբ տպագրականի)՝ առանց Համահեղինակների գրավոր համաձայնության:

11.1. Սույն պայմանագրի առարկա դասագրքերը և ձեռնարկը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու (ամբողջովին, հատվածաբար կամ թարգմանաբար) իրավունքը այլ հրատարակչություններին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին վաճառքի ընդհանուր գնի 20 տոկոսը:

12. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի և ձեռնարկի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակներն իրավունք չունեն տրամադրելու դասագրքերի նյութերը որևէ այլ հրատարակչության, ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

13. Հեղինակային իրավունքի փոխանցումը, սույն պայմանագրի առարկա դասագրքերի և ձեռնարկի նկատմամբ, կատարվում է 10 (տասը) տարի ժամկետով:

Վեց (6) տարի անընդմեջ, սույն պայմանագրի առարկա դասագրքերի և ձեռնարկի վերատպություն չիրականացնելու դեպքում, հեղինակային իրավունքի փոխանցումը կասեցվում է, և Համահեղինակները կարող են, իրենց հայեցողությամբ, փոխանցել այն ցանկացած այլ Հրատարակչի:

14. Հեղինակային իրավունքի փոխանցման ողջ ժամկետի ընթացքում, Հրատարակիչը և Համահեղինակները, պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարենպաստության սկզբունքով:

15. Հեղինակային իրավունքին վերաբերող պայմանավորվածություններից (հոդված 11; 12; 13; իրենց ենթակետերով) յուրաքանչյուրից որևէ մեկը խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ, որի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության չկայանալու դեպքում վեճը լուծվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պայմանավորում են համագործակցել 2011–2013 ուսումնական տարիների Հայաստանի միջին դպրոցի դասագրքերի հրատարակման շուրջ, Դասագրքերի շրջանառու հիմնադրամի մրցույթին մասնակցելու մասին:

17. Համագործակցությունն ընդգրկում է տասներկուամյա ավագ դպրոցի հումանիտար հոսքի « Մաթեմատիկա 5», « Մաթեմատիկա 3» և « Մաթեմատիկա 5-6: Ուսուցչի ձեռնարկ» 7-9-րդ դասարանների դասագրքերի և ձեռնարկի ստեղծումը:

18. Համահեղինակները պարտավորվում են դասագրքերի բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշչին, ուսումնական ծրագրին ու ժամաքանակին:

19. Հրատարակիչը պարտավորվում է ձեռագրերը ստանալուց հետո, տասը օրվա ընթացքում, Համահեղինակների հետ, քննարկման ներկայացնել շարվածքի և ձևավորման նախնական տարբերակը:

20. «Մաթեմատիկա 5» դասագրքի 60%-ի, «Մաթեմատիկա 6» դասագրքի 60%-ի, և «Մաթեմատիկա 5-6: Ուսուցչի ձեռնարկ» ձեռնարկի 60%-ի վերջնական տարբերակները ԴՇՀ-ի մրցույթին ներկայացնելու համար պետք է հանձնվեն Հրատարակչին մինչև 2011թ. մարտի 15-ը:

20.1. Մրցույթում շահելու դեպքում «Մաթեմատիկա 5» 5-րդ դասարանի և «Մաթեմատիկա 5-6: Ուսուցչի ձեռնարկ» դասագրքի ու ձեռնարկի ավարտուն տարբերակները պետք է հանձնվեն Հրատարակչին մինչև 2011թ. մայիսի 10-ը, իսկ «Մաթեմատիկա 6» 6-րդ դասարանի դասագրքի ավարտուն տարբերակը՝ մինչև 2011թ. հոկտեմբերի 30-ը :

21. Մրցույթում շահելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին «Մաթեմատիկա 5», «Մաթեմատիկա 6» և «Մաթեմատիկա 5-6: Ուսուցչի ձեռնարկ» դասագրքերի և ձեռնարկի համար հեղինակային վարձատրության (ռոյալտի) լրիվ տպաքանակի Հրատարակչի վաճառքի գնի տասը (10) տոկոսին համապատասխան գումար:

«Մաթեմատիկա 5» և «Մաթեմատիկա 5-6: Ուսուցչի ձեռնարկ» դասագրքի ու ձեռնարկի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2011թ. հոկտեմբերի 30-ին:

«Մաթեմատիկա 6» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2012թ. հոկտեմբերի 30-ին:

21.1. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

21.2. Հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) բաշխվում է հեղինակային խմբի անդամների միջև հետևյալ համամասնությամբ՝ Բորիս Նահապետյան՝ 70%, Աշոտ Աբրահամյան՝ 30%:

22. Մրցույթում հաղթած դասագրքերի հետագա վերահրատարակությունների ժամանակ Հրատարակիչը Համահեղինակներին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի) վերահրատարակման տպաքանակին համապատասխան Հրատարակչի վաճառքի գնի յոթ (7) տոկոսի չափով:

22.1. Դասագրքերի վերահրատարակման ժամկետները և տպաքանակը (ելնելով ԴՇՀ-ի պատվերից) որոշում է Հրատարակիչը: Վերահրատարակությունն իրականացնելու համար Համահեղինակների հատուկ թույլտվություն չի պահանջվում, սակայն Հրատարակիչը պետք է Համահեղինակների հետ քննարկի դասագրքերի հնարավոր մասնակի բարեփոխումների հարցը:

23. Մրցույթի համար պատրաստվող դասագրքերի ցանկացած հատվածի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակները իրավունք չունեն դասագրքերը ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնելու այլ անձանց:

24. Համահեղինակները ԴՇՀ-ի մրցույթին պատրաստվող և սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերը կազմելիս պարտավորվում են չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ նույն խմբաքանակի համար նախատեսվող դասագրքերի ստեղծման նպատակով:

25. Հեղինակային խմբի անդամների ազգանունները դասագրքերի շապիկի ու տիտղոսաթերթի վրա տրվում են հետևյալ հերթականությամբ.

Բորիս Սերգեյի Նահապետյան
Աշոտ Սերգեյի Աբրահամյան

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

27. Պայմանագիրը կնքված է չորս հավասարազոր օրինակներից, որից մեկ օրինակը պահվում է Կենտրոն նոտարական տարածքում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

1.

2.

Երկու հազար տասնմեկ թվականի մարտի իննին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի
նոտար Նունե Սարգսյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում հ. 1174

Գանձված է պետական տուրք և ծառայության
վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի և
Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՏԱՐ

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱԿՄԻԼԱՆ ԱՐՄԵՆԻԱ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ
MACMILLAN ARMENIA PUBLISHING HOUSE

Ղ. Փարպեցի 9, Երևան 375002, Հայաստան
tel: (3741) 53-79-62, 53-79-65
email: pmacmil@arminco.com

Gh.Parpetsy 9, Yerevan 375002, Armenia
fax: (3741) 537 991
www.macmillanarmenia.am

2 մայիսի 2006

# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՄԱԿՄԻԼԱՆ-ԱՐՄԵՆԻԱ ՀՁ ՓԲԸ հրատարակչությունը, ի դեմս Հրատարակչական տնօրեն Ռուբեն Աղայանի, տեքստում այսուհետև Հրատարակիչ, մի կողմից, և տասներկուամյա հանրակրթական դպրոցի առաջին դասարանի «Մայրենի – 1» դասագրքի հեղինակ Վաչագան Սարգսյանի, տեքստում այսուհետև Հեղինակ, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են հետևյալի մասին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Հեղինակի ներկայացրած դասագիրքը:

2. Հեղինակը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել դասագիրքը, որն իր ամբողջության մեջ պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Հեղինակը ձեռագիրը Հրատարակչին է ներկայացնում մեքենագիր տեսքով, 2 օրինակից, խմբագրված և ավարտուն՝ հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

4. Հեղինակը երաշխավորում է, որ Հրատարակչին ներկայացված դասագիրքը լիովին ինքնուրույն է, չի կրկնում որևէ այլ աշխատություն, չի պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Հեղինակը պատասխանատու է այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած իր ոտնձգությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսեր):

5. Հեղինակը պարտավոր է իր դասագիրքը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին, զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

5.1. Հակառակ դեպքում, եթե դասագիրքը չի համապատասխանում Հրատարակչի նախատեսած ձևին և բովանդակությանը, կամ նրա դրդեցրած սկզբունքներին, Հրատարակիչը իրավասու է չեղյալ համարել Հեղինակի հետ կնքած պայմանագիրը, իսկ Հեղինակը պարտավոր է վերադարձնել Հրատարակչին իր ստացած հոնորարի կանխավճարը, եթե այդպիսին եղել է:

6. Դասագիրքն ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորվում է կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքներն իր հաշվին:

6.1. Հրատարակիչը այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջել Հեղինակից կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով:

6.2. Հեղինակը հրատարակչական աշխատանքների ընթացքում նույնպես իրավունք ունի իր աշխատանքում փոփոխություններ մտցնելու, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի Հրատարակչի ընդհանուր հրատարակչական ծախսերի 10 տոկոսը: Դրանից ավելի մեծ ծախսերի հետ կապված փոփոխությունների հետևանքով Հրատարակչի կրեցրած գումարները պահվում են Հեղինակի հոնորարից:

7. Եթե Հեղինակի ներկայացրած դասագրքի տեքստը լեզվական առումով արմատական խմբագրության կարիք է զգում, ապա Հրատարակիչը վարձում է անկախ խմբագրի, որին տրվող վարձատրության գումարները պահվում են Հեղինակի հոնորարից:

8. Հեղինակը իրավունք ունի իր դիտողությունները հայտնել Հրատարակչի առաջարկած ձևավորման և նկարազարդման (դիզայն և իլյուստրացիա) վերաբերյալ: Բայց այդ աշխատանքները սկսվելուց հետո, Հեղինակը իրավունք չունի պահանջել ձևավորողի կամ նկարչի փոփոխություն, կամ պետք է իր հոնորարի հաշվից փոխհատուցի այդ փոփոխության պատճառով Հրատարակչի կրած նյութական վնասները:

8.1. Նկարչական և իլյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ դեմքին տրվելու ենթակա չեն:

9. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո դասագրքի նյութերի առաջին ընթերցումը կատարում է Հեղինակը:

9.1. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների պարտավորությունների մեջ:

10. Գրքի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն է:

11. Դասագրքի հեղինակային իրավունքը պատկանում է Հեղինակին: Հրատարակիչը իրավունք չունի վերահրատարակել, թարգմանել, տարածել այն գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով՝ առանց Հեղինակի գրավոր համաձայնության:

11.1. Դասագիրքը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու (ամբողջովին, հատվածաբար կամ թարգմանաբար) իրավունքը այլ հրատարակչություններին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին վաճառքի ընդհանուր գնի 20 տոկոսը:

12. Դասագրքի հրատարակչական իրավունքը պատկանում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի այն՝ տրամադրել որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

12.1. Հրատարակչական իրավունքը տարածվում է նաև հեղինակի այն նախորդ և հետագա գործերի վրա, որոնք ներկա պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքի օրգանական շարունակությունը կամ մասն են հանդիսանալու, և բնականաբար չեն կարող հանձնվել որևէ այլ Հրատարակչի:

13. Հրատարակչական իրավունքը սույն պայմանագրի առարկա դասագրքի նկատմամբ պահպանվում է 10 (տասը) տարի այնքան ժամանակ, քանի դեռ Հրատարակիչը հնարավորություն և ցանկություն ունի որոշակի պարբերականությամբ հրատարակելու այն:

13.1. Սակայն, 3 (երեք) տարի անընդմեջ դասագրքի վերահրատարակությունը չիրականացնելու դեպքում դասագրքի հրատարակչական իրավունքը անցնում է Հեղինակին, և հեղինակը ազատ է իր հայեցողությամբ այն հանձնել այլ Հրատարակչի:

14. Հրատարակչական իրավունքի գործողության ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Հեղինակը պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարեխղճության սկզբունքով: Հրատարակիչը պարտավոր-

վում է առաջին խակ հնարավորության դեպքում Հեղինակի սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքի հետ առնչություն չունեցող որևէ այլ աշխատություն ընդունել հրատարակության, իսկ հեղինակը պարտավորվում է իր ցանկացած նոր աշխատություն առաջին հերթին առաջարկել Հրատարակչին:

15. Հեղինակային և հրատարակչական խրախուսանքներին վերաբերվող պայմանավորվածություններից (եռդված11; 12: 13; իրենց ենթակետերով) յուրաքանչյուրից որևէ մեկը խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ, որի չափը վճռում է դատարանը:

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են համագործակցել 2006-2007 թ.թ. Հայաստանում հանրակրթական դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրին մասնակցելու մասին:

17. Համագործակցությունը ընդգրկում է տասներկուամյա հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի «Մայրենի – 1» դասագիրքը:

18. «Մայրենի – 1» դասագրքի ձեռագրի վերջնական և ավարտուն տարբերակը պետք է հանձնվի Հրատարակչին մինչև 2006թ. մայիսի 25-ը:

19. «Մայրենի – 1» դասագրքի առաջին հրատարակության համար Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին հեղինակային վարձատրություն (ռոյալտի) լրիվ տպաքանակի Հրատարակչի վաճառքի գնի 9 (ինը) տոկոսին համապատասխան գումարի չափով:

20. Երկրորդ հրատարակության համար Հրատարակիչը Հեղինակին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի) լրիվ տպաքանակի Հրատարակչի վաճառքի գնի 6 (վեց) տոկոսին համապատասխան գումարի չափով:

21. «Մայրենի – 1» դասագրքի բոլոր հետագա վերահրատարակությունների համար Հրատարակիչը Հեղինակին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի) լրիվ տպաքանակի Հրատարակչի վաճառքի գնի 5 (հինգ) տոկոսին համապատասխան գումարի չափով:

22. Յուրաքանչյուր հրատարակության դեպքում, անկախ տպաքանակից, ՀԵՂԻՆԱԿԻՆ անվճար հատկացվում է 3 օրինակ դասագիրք և տրվում է 10 դասագիրք (առևտրական տպաքանակ իրականացնելու դեպքում) ինքնարժեքով գնելու հնարավորություն:

23. Դասագրքերի ցանկացած հատվածի հրատարակչական իրավունքը պատկանում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի դրանք հանձնել որևէ երրորդ կողմի ամբողջությամբ կամ մասամբ:

24. Սույն պայմանագրի 18-22-րդ հոդվածների պայմանների խախտման դեպքում գործողության մեջ է մտնում "Ընդհանուր դրույթների" թիվ 15 հոդվածը:

25. Սույն պայմանագիրը ենթադրում է Համաշխարհային Բանկի և ՀՀ ԿԳՆ մրցույթների հաջորդ փուլերին Հեղինակի և Հրատարակչի համագործակցությունը, եթե այդ փուլերում նախատեսվում է տվյալ առարկայի որևէ այլ խմբաքանակ, եթե Հեղինակը պատրաստում է այդ խմբաքանակով նախատեսված դասագրքերը և եթե Հրատարակիչը մասնակցելու է մրցույթին այդ լոտի շրջանակներում (տես "Ընդհանուր դրույթներ" հոդված 12.1: 14):

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ եթե բանակցությունները արդյունք չեն տալիս դատական կարգով:

27. Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, երկուսն էլ օժտված հավասարազոր իրավաբանական ուժով կողմերի շահերը ներկայացնելու համար վիճաբանական իրադրություններում:

**Կողմերի իրավաբանական հասցեները**

ՄԱԿՄԻԼԱՆ-ԱՐՄԵՆԻԱ ՓԲԸ
Երևան, Ղ.Փարպեցու 9/7
ՀՎՀՀ 02533144

Հրատարակչական տնօրեն
ՌՈՒԲԵՆ ԱՂԱՅԱՆ

ՎԱՀԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(անձնագրի համար AB 0513115)
012; 25 Մայիսի 1951
16 թաղ., շ. 30, բն. 12

ՎԱՀԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

06.03.2018

Համաձայնագիր

«ՄԱԿՄԻԼԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՀՁ ՓԲԸ-ի, ի դեմս Հրատարարակչական տնօրեն Ռուբեն Աղայանի, տեքստում այսուհետև Հրատարակիչ, մի կողմից, և տասներկուամյա հանրակրթական դպրոցի առաջին դասարանի «Մայրենի-1» դասագրքի հեղինակ Վաչագան Սարգսյանի, տեքստում այսուհետև Հեղինակ, մյուս կողմից, առ 2006թ. 2 մայիսի կնքված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին

«ՄԱԿՄԻԼԱՆ-ԱՐՄԵՆԻԱ» ՀՁ ՓԲԸ-ի իրավահաջորդ «ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ հրատարակչությունը, ի դեմս Գլխավոր խմբագիր Ռուբեն Աղայանի, տեքստում այսուհետև Հրատարակիչ, մի կողմից, և հանրակրթական դպրոցի առաջին դասարանի «Մայրենի-1» դասագրքի հեղինակ Վաչագան Սարգսյանի, տեքստում այսուհետև Հեղինակ, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ երկարաձգում են 2006թ. մայիսի 2-ին Հրատարակչի և Հեղինակի միջև կնքված պայմանագրի (իր բոլոր կետերով) ժամկետը ևս 10 (տաս) տարով մինչև 2028 թ. մարտի 6:

**ՀՐԱՏԱՐԱԿԻՉ**

«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ

Երևան, Ղ.Փարպեցու 9

ՀՎՀՀ 02533144

ՌՈՒԲԵՆ ԱՂԱՅԱՆ

Գլխավոր խմբագիր

«ՄԱՆՄԱՐ» «MANMAR» 02533144

**ՀԵՂԻՆԱԿ**

ՎԱՉԱԳԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Անձնագիր՝ AM0441770

Ծնվ. 25.05.1951

012; 01.09.2011

Երևան, 16 թղմ. շ.30, բն. 12

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

առուվաճառքի մասին

ք. [illegible]　　　　　　　　　　　　　«20» [illegible] 2015 թ.

[illegible], հետագայում՝ «Գնորդ», ի դեմս
(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի ա.ա.հ.)
[illegible], որը գործում է բստ [illegible]-ի
(պաշտոնը, ա.ա.հ.)　　　　　　　　　　　　(կանոնադրություն, լիազորագիր)
կողմից, և ______________________________, հետագայում՝ «Վաճառող»,
(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի ա.ա.հ.)
ի դեմս [illegible], որը գործում է բստ ______________, մյուս
(պաշտոնը, ա.ա.հ.)　　　　　　　　　　　　(կանոնադրություն, լիազորագիր)
կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը գնում է համապատասխան տարայով և (կամ) փաթեթավորմամբ հետևյալ ապրանքը՝

| հ/հ | Անվանումը | Քանակությունը | Գինը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| 2 | [illegible] | | |
| 3 | | | |
| 4 | [illegible] | | 5780000 |
| 5 | | | |
| 6 | [illegible] | | |
| 7 | | | |
| 8 | | | |

Ընդամենը վաճառվում են [illegible] դրամ գումարով
(գումարը բառերով)
նշված ապրանքային արժեքները։

2. Վաճառվող ապրանքների գնի հաշվարկը (կցվում է) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը։

3. Ապրանքների համար վճարումը իրականացվում է հետևյալ կերպ՝ [illegible]

4. Կողմերը պարտավորվում են ստուգել ապրանքների որակը՝ օրենքներով, այլ իրավական ակտերով, պետական ստանդարտների պահանջներով սահմանված կարգով, իսկ եթե ապրանքների որակի ստուգման կարգը դրանցով սահմանված չէ, ապա համաձայն գործարար շրջանառության սովորույթներով կամ սովորաբար կիրառվող այլ պայմաններով։

5. Վաճառողը պարտավորվում է՝

ա) ապրանքները Գնորդին հանձնել մինչև հետևյալ ժամկետը՝ ______________, տեղեկացնելով Գնորդին ապրանքների փոխանցմանը պատրաստ լինելու մասին.

բ) փոխանցել Գնորդին ապրանքները այն խելամիտ ժամկետի սահմաններում,որոնք պիտանի են այն նպատակների համար, որոնց համար այդ տեսակի ապրանքները սովորաբար օգտագործվում են.

գ) հանձնված անպատշաճ որակի ապրանքի համար՝

- համաչափ պակասեցնել ապրանքի գինը,
- ողջամիտ ժամկետում ______ օրում վերացնել ապրանքի թերությունները,
- հատուցել գնորդի կրած ծախսերը թերությունները վերացնելու դեպքում,
- փոխարինել ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով։

6. Գնորդը պարտավորվում է՝

ա) հայտնել Վաճառողին սույն պայմանագրի՝ ապրանքների քանակության, տեսականու, որակի, ամբողջականության, տարայի և (կամ) փաթեթավորման վերաբերյալ պայմանների խախտման մասին՝ հետևյալ ժամկետի ընթացքում ____________________

բ) ընդունել ապրանքները՝ սույն պայմանագրով սահմանված կարգով

գ) վճարել ապրանքների համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով

դ) Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք, բացառությամբ այն դեպքի, երբ Գնորդը համաձայնվում է ընդունել երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված ապրանք:

7. Սույն պայմանագրով նախատեսվում է ապրանքի ապահովագրման ____________________ ____________________ պարտականություն

(նշել կողմերին)

8. Սույն պայմանագրով սահմանվում է ապրանքի որակի երաշխիքային ժամկետ ______ օր, որն սկսվում է ապրանքը հանձնելու պահից:

9. Սույն պայմանագրի կողմից նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար, բացի ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից, Կողմերը կրում են հետևյալ պատասխանատվությունը ____________________

____________________

(նշել տույժի (տուգանքի) չափը Գնորդի և Վաճառողի կողմից պարտավորությունները խախտելու դեպքում)

10. Կողմերի այն փոխհարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

11. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից և գործում է մինչև «__» ________ 2014թ.

12. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը:

13. Կողմերի հասցեները և վավերապայմանները՝

| «Վաճառող» | «Գնորդ» |
|---|---|
| AK 0612670, 008 | «ՄԱՆՄԱՐ» |
| 02.05.2010 | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. «ՄԱՆՄԱՐ» «MANMAR» 02533144 |

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղ. Երևան
Երկու հազար տասներկու թվականի հունիսի տասնութին

ՀՀ ԿԳՆ-ի և Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու և դասագրքերի ձեռագրեր ներկայացնելու նպատակով համագործակցության մասին

«ՍԱՆՄԱՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Ղ. Փարպեցու փող.,ինը / 9/ շենք, բնակարան յոթ /7/, ի դեմս տնօրեն Ալա Հարությունյանի, որի կողմից 05.05.2012թ. հաստատված թիվ 011 լիազորագրով գործում է Միհրան Անդրանիկի Բարսեղյանը, ծնված 28.07.1970թ., հաշվառված քաղ. Երևան, Օրբելի փող., տասներկու (12) շենք, բնակարան քսանութ (28), անձնագիր՝ AH 0210065 տրված 01.06.2006թ. 004-ի կողմից, հետագայում «Հրատարակիչ», մի կողմից, և խմբաքանակ 6-ի («Հայոց պատմություն 6», «Հայոց պատմություն 7») «Հայոց պատմություն 6» դասագրքի հեղինակային խումբը, ի դեմս Բաբկեն Հարությունի Հարությունյանի, ծնված 04.03.1941թ., անձնագիր՝ AK 0457030, տրված 17.03.2010թ. 001-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Չարենցի փող., շենք 4 (չորս), բնակարան հիսունհինգ (55) (խմբի ղեկավար), Վլադիմիր Բախշոյի Բարխուդարյանի, ծնված 22.09.1927թ., անձնագիր՝ AH 0518945, տրված 25.01.2008թ. 012ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Հալաբյան փող., շենք 3 (երեք), բնակարան քսանչորս (24), Պետրոս Հովհաննիսյանի, ծնված 22.06.1944թ., անձնագիր AB 0605790, տրված 11.02.1998թ. 009-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 11.02.2013թ, հաշվառված քաղ. Երևան, Նոր Արեշ քսանվեց /26/ փող. տուն քսաներկու /22/, Իգիթ Գարեգինի Ղարիբյանի, ծնված 01.12.1937թ., անձնագիր AK 0637902, տրված 18.10.2010թ. 005-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Գայի պող., շենք 18 (տասնութ), բնակարան տասը (10), և «Հայոց պատմություն 7» դասագրքի հեղինակային խումբը, ի դեմս Բաբկեն Հարությունի Հարությունյանի, ծնված 04.03.1941թ., անձնագիր՝ AK 0457030, տրված 17.03.2010թ. 001-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Չարենցի փող., շենք 4 (չորս), բնակարան հիսունհինգ (55) (խմբի ղեկավար), Վլադիմիր Բախշոյի Բարխուդարյանի, ծնված 22.09.1927թ., անձնագիր՝ AH 0518945, տրված 25.01.2008թ. 012ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Հալաբյան փող., շենք 3 (երեք), բնակարան քսանչորս (24), Պետրոս Հովհաննիսյանի, ծնված 22.06.1944թ., անձնագիր AB 0605790, տրված 11.02.1998թ. 009-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 11.02.2013թ, հաշվառված քաղ. Երևան, Նոր Արեշ քսանվեց /26/ փող. տուն քսաներկու /22/, Իգիթ Գարեգինի Ղարիբյանի, ծնված 01.12.1937թ., անձնագիր AK 0637902, տրված 18.10.2010թ. 005-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան. Գայի պող., շենք 18 (տասնութ), բնակարան տասը (10), Հայրապետ Գևորգի Մարգարյանի, ծնված 10.10.1950թ., անձնագիր՝ AH 0396850, տրված 28.07.2011թ. 008-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Րաֆու փող., շենք 51 (հիսունմեկ), բնակարան քսանվեց (26), Արտաշես Շահնազարյանի, ծնված 02.08.1948թ., անձնագիր՝ AC 0621070, տրված 28.11.1998թ. 008-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 28.11.2013թ. հաշվառված քաղ. Երևան, Շերամի փող., շենք 93 (իննսուներեք), բնակարան երեսունմեկ (31), հետագայում «Համահեղինակներ» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են 2013–2015 ուսումնական տարիների Հայաստանում հանրակրթական դպրոցի դասագրքերի ստեղծման և 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու նպատակով համագործակցության մասին:

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և ԴՇՀ-ի հետ կնքվելիք պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Համահեղինակների ներկայացրած դասագրքերը:
2. Համահեղինակները պարտավորվում են սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել իրենց հեղինակային նյութը, որը պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Համահեղինակներն իրենց աշխատանքային նյութը Հրատարակչին են ներկայացնում մեքենագիր տեսքով, 2 օրինակից, խմբագրված և ավարտուն հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

4. Համահեղինակները երաշխավորում են, որ Հրատարակչին ներկայացրած դասագրքերը լիովին ինքնուրույն են, չեն կրկնում որևէ այլ հեղինակի հեղինակային նյութ, չեն պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Համահեղինակները պատասխանատու են այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած գործողությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսերը):

5. Համահեղինակները պարտավոր են իրենց հեղինակային նյութը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

6. Հեղինակային նյութն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավորվում է կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքներն իր հաշվին:

6.1. Հրատարակիչն այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջելու Համահեղինակներից կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ հեղինակային նյութի մեջ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով և 2012-ԴՇՀ մրցույթի պայմաններով:

6.2. Համահեղինակները հրատարակչական աշխատանքների ընթացքում նույնպես իրավունք ունեն իրենց հեղինակային նյութի մեջ փոփոխություններ մտցնելու, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի Հրատարակչի ընդհանուր հրատարակչական ծախսերի 10 տոկոսը: Դրանից ավելի մեծ ծախսերի հետ կապված փոփոխությունների հետևանքով Հրատարակչի կորցրած գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

7. Համահեղինակները իրավունք ունեն իրենց դիտողությունները հայտնելու Հրատարակչի առաջարկած ձևավորման և նկարազարդման (դիզայն և իլյուստրացիա) վերաբերյալ: Բայց այդ աշխատանքները սկսվելուց հետո, Համահեղինակները իրավունք չունեն պահանջելու ձևավորողի կամ նկարչի փոփոխություն, կամ պետք է իրենց հեղինակային վարձատրության (ռոյալտի) հաշվին փոխհատուցեն այդ փոփոխության պատճառով Հրատարակչի կրած նյութական վնասները:

7.1. Նկարչական և ինյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ անձանց տրվելու ենթակա չեն:

8. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո, հեղինակային նյութերի առաջին ընթերցումը կատարում են Համահեղինակները:

8.1. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների մեջ:

9. Գրքերի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն են:

10. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի հեղինակային իրավունքը պատկանում է Համահեղինակներին: Հրատարակիչը իրավունք չունի թարգմանելու, տարածելու դրանք գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով (բացառությամբ տպագրականի)՝ առանց Համահեղինակների գրավոր համաձայնության:

10.1. Սույն պայմանագրի առարկա դասագրքերը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու (ամբողջովին, հատվածաբար կամ թարգմանաբար) իրավունքը այլ հրատարակչություններին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին վաճառքի ընդհանուր գնի 20 տոկոսը:

11. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակներն իրավունք չունեն տրամադրելու դասագրքերի նյութերը որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերանշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

12. Հեղինակային իրավունքի փոխանցումը սույն պայմանագրի առարկա դասագրքերի նկատմամբ կատարվում է 10 (տասը) տարի ժամկետով:

13. Հեղինակային իրավունքի փոխանցման ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Համահեղինակները պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարեխղճության սկզբունքով:

14. Հեղինակային իրավունքին վերաբերող պայմանավորվածություններից (հոդված 10; 11; 12; իրենց ենթակետերով) յուրաքանչյուրից որևէ մեկը խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ, որի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ վճռում է դատարանը:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պայմանավորում են համագործակցել 2013–2015 ուսումնական տարիների Հայաստանի հանրակրթական դպրոցի դասագրքերի հրատարակման 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու մասին:

16. Համագործակցությունն ընդգրկում է հանրակրթական դպրոցի «Հայոց պատմություն 6», «Հայոց պատմություն 7» 6-7-րդ դասարանների դասագրքերի ստեղծումը:

17. Համահեղինակները պարտավորվում են դասագրքերի բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշչին, ուսումնական ծրագրին ու ժամաքանակին:

18. «Հայոց պատմություն 6» դասագրքի 100%-ի, «Հայոց պատմություն 7» դասագրքի 60%-ի վերջնական տարբերակները ԴՇՀ-ի մրցույթին ներկայացնելու համար պետք է հանձնվեն Հրատարակչին մինչև 2012թ. հուլիսի 31-ը:

19. Մրցույթում շահելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին «Հայոց պատմություն 6», «Հայոց պատմություն 7» դասագրքերի համար Հրատարակչի վաճառքի գնի քսան (20) տոկոսին համապատասխան գումար (ռոյալտի):

«Հայոց պատմություն 6» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2013թ. հոկտեմբերի 30-ին:

«Հայոց պատմություն 7» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2014թ. հոկտեմբերի 30-ին:

19.1. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

20. Խմբի ղեկավարը հանդիսանում է միաժամանակ դասագրքերի գիտական խմբագիր և նրա վարձատրությունը գիտական խմբագրության համար (ռոյալտի) կազմում է խմբի ընդհանուր հեղինակային վարձատրության (ռոյալտի) 12 (տասներկու) տոկոսը:

21. Հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) բաշխումը հեղինակային խմբի անդամների միջև կատարվում է դասագրքերում նրանց հեղինակային նյութի ծավալին համապատասխան՝ խմբի ղեկավարի գրավոր ներկայացմամբ:

22. Մրցույթում հաղթած դասագրքերի հետագա վերահրատարակությունների ժամանակ Հրատարակիչը Համահեղինակներին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի) վերահրատարակման տպաքանակին համապատասխան Հրատարակչի վաճառքի գնի տասը (10) տոկոսի չափով:

22.1. Դասագրքերի վերահրատարակման ժամկետները և տպաքանակը (ելնելով ԴՇՀ-ի պատվերից) որոշում է Հրատարակիչը: Վերահրատարակությունն իրականացնելու համար Համահեղինակների հատուկ թույլտվություն չի պահանջվում, սակայն Հրատարակիչը պետք է Համահեղինակների հետ քննարկի դասագրքերի հնարավոր մասնակի բարեփոխումների հարցը:

23. Մրցույթի համար պատրաստվող դասագրքերի ցանկացած հատվածի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակները իրավունք չունեն դասագրքերը ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնելու այլ անձանց:

24. Համահեղինակները ԴՇՀ-ի մրցույթին պատրաստվող և սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերը կազմելիս պարտավորվում են չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ նույն խմբաքանակի համար նախատեսվող դասագրքերի ստեղծման նպատակով:

25. Հեղինակային խմբի անդամների ազգանունները դասագրքերի շապիկի ու տիտղոսաթերթի վրա տրվում են այբբենական կարգով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

27. Պայմանագիրը կնքված է երեք հավասարազոր օրինակներից, որից մեկ օրինակը պահվում է Կենտրոն նոտարական տարածքում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ
ՀՐԱՎԻՐԱԿԻՉ՝

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Պ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ի. ՂԱՐԻԲՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Երկու հազար տասներկու թվականի հունիսի տասնութին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում h. 3290

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի և Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՏԱՐ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

քաղ. Երևան

Երկու հազար տասներկու թվականի հունիսի տասնութին

ՀՀ ԿԳՆ-ի և Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու և դասագրքերի ձեռագրեր ներկայացնելու նպատակով համագործակցության մասին

«ՄԱՆՄԱՐ» փակ բաժնետիրական ընկերությունը (իրավաբանական հասցեն՝ քաղ. Երևան, Դ. Փարպեցու փող.,ինը / 9/ շենք, բնակարան յոթ /7/, ի դեմս տնօրեն Ալա Հարությունյանի, որի կողմից 05.05.2012թ. հաստատված թիվ 011 լիազորագրով գործում է Միհրան Անդրանիկի Բարսեղյանը, ծնված 28.07.1970թ., հաշվառված քաղ. Երևան, Օրբելի փող., տասներկու (12) շենք, բնակարան քսանութ (28), անձնագիր՝ AH 0210065 տրված 01.06.2006թ. 004-ի կողմից,հետագայում «Հրատարակիչ», մի կողմից, և խմբաքանակ 7-ի («Հայոց պատմություն 8», «Հայոց պատմություն 9») «Հայոց պատմություն 8» դասագրքի հեղինակային խումբը, Վլադիմիր Բախշոյի Բարխուդարյանի, ծնված 22.09.1927թ., անձնագիր՝ AH 0518945, տրված 25.01.2008թ. 012ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Հալաբյան փող., շենք 3 (երեք), բնակարան քսանչորս (24), Պավլիկ Աշոտի Չոբանյանի, ծնված 15.03.1948թ., անձնագիր՝ AM 0286980, տրված 05.05.2011թ. 012-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, 16 թաղ., շենք 45 (քառասունհինգ), բն. 32 (երեսուներկու), Էմմա Կոստանդյանի ծնված 23.07.1934թ., անձնագիր՝ AC 0296026, տրված 25.06.1998թ. 009ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 25.06.2013թ. հաշվառված քաղ. Երևան, Տ. Մեծի քառասուն /40/ շենք, բնակարան յոթանասունութ /78/ Ալբերտ Արմենակի Խառատյանի, ծնված 24.09.1939թ., անձնագիր՝ AM 0748162, տրված 30.05.2012թ. 004-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Գյուլբենկյան փող/. քառասունվեց/46/ շենք, բնակարան երեսունվեց /36/ , Ռուբեն Օնիկի Սահակյանի, ծնված / 02/.01.1958թ., անձնագիր AM 0644589, տրված 22.02.2012թ. 010-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Մխ. Հերացու փող. քսաներկու /22/ շենք, բնակարան չորս /4/,Ռուբեն Հենրիկի Գասպարյանի, ծնված 26.06.1962թ. թ.անձնագիր AK 0490616, տրված 26.04.2010թ. 011-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Նալբանդյան փող. հիսուն /50/ շենք, բնակարան հիսունչորս /54/ Արարատ Մխիթարի Հակոբյանի, ծնված 26.02.1947թ., անձնագիր AE 0603172, տրված 12.07.2000թ. 012-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 12.07.2015թ. հաշվառված քաղ. Երևան, 16 թաղ. քառասուներեք /43/ շենք, բնակարան երեսունմեկ /31/, Աշոտ Արեստակի Ղուկասյանի (դասագրքի մեթոդական ապարատի կազմում), ծնված 01.02.1954թ., անձնագիր AM 0531851, տրված 25.11.2011թ. 013-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Դավթաշեն, 2 (երկրորդ) թաղ., շենք 6 (վեց), բնակարան քառասունյոթ (47), և «Հայոց պատմություն 9» դասագրքի հեղինակային խումբը, ի դեմս Վլադիմիր Բախշոյի Բարխուդարյանի, ծնված 22.09.1927թ., անձնագիր՝ AH 0518945, տրված 25.01.2008թ. 012ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Հալաբյան փող., շենք 3 (երեք), բնակարան քսանչորս (24), Արարատ Մխիթարի Հակոբյանի, ծնված 26.02.1947թ., անձնագիր AE 0603172, տրված 12.07.2000թ. 012-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 12.07.2015թ. հաշվառված քաղ. Երևան, 16 թաղ. քառասուներեք /43/ շենք, բնակարան երեսունմեկ /31/, Համլետ Մալխասի Հարությունյանի, ծնված 25.09.1948թ., անձնագիր՝ AM 0686410, տրված 18.04.2012թ. 005-ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Ն. Նորքի յոթ /7 /գ. երեսունմեկ / 31/ շենք, բնակարան տասնինը/ 19/ , Վլադիմիր Նահապետի Ղազախեցյանի, ծնված 14.02.1926թ., անձնագիր AM 0525122., տրված 18.11.2011թ. 011ի կողմից, հաշվառված քաղ. Երևան, Նալբանդյան փող. մեկ հարյուր երկու /102/ շենք, բնակարան քսաներկու /22/, Էդվարդ Լևոնի Մելքոնյանի, ծնված 27.08.1964թ.., անձնագիր AM 0300452., տրված 16.05.2011թ. 011ի կողմից, հաշվառված քաղ. Երևան Մաշտոցի հիսունմեկ /51/, շենք, բնակարան հինգ /5/, Էդիկ Գարեգինի Մինասյանի, ծնված 27.06.1956թ., անձնագիր AC 0341391, տրված 25.12.1998թ. 013-ի կողմից, վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 25.12.2013թ. հաշվառված քաղ. Երևան, Դավիթաշեն, չորրորդ /4/ թաղ. ութ /8/ շենք, բնակարան երկու /2/,Աշոտ Արեստակի Ղուկասյանի (դասագրքի մեթոդական ապարատի կազմում), ծնված 01.02.1954թ., անձնագիր AM 0531851, տրված 25.11.2011թ. 013-ի կողմից, հաշվառված

քաղ. Երևան, Դավթաշեն, 2 (երկրորդ) թաղ., շենք 6 (վեց), բնակարան քառասունյոթ (47), հետագայում «Համահեղինակներ» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են 2013–2015 ուսումնական տարիների Հայաստանում հանրակրթական դպրոցի դասագրքերի ստեղծման և 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու նպատակով համագործակցության մասին:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և ԴՇՀ-ի հետ կնքվելիք պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Համահեղինակների ներկայացրած դասագրքերը:

2. Համահեղինակները պարտավորվում են սույն պայմանագրով նախատեսված ժամկետին Հրատարակչին ներկայացնել իրենց հեղինակային նյութը, որը պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:

3. Համահեղինակներն իրենց աշխատանքային նյութը Հրատարակչին են ներկայացնում մեքենագիր տեսքով, 2 օրինակից, խմբագրված և ավարտուն հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

4. Համահեղինակները երաշխավորում են, որ Հրատարակչին ներկայացրած դասագրքերը լիովին ինքնուրույն են, չեն կրկնում որևէ այլ հեղինակի հեղինակային նյութ, չեն պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

4.1. Նման իրավիճակների դեպքում Համահեղինակները պատասխանատու են այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած գործողությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցեսի, իրավաբանական ծառայությունների, տուգանքների հետ կապված ծախսերը):

5. Համահեղինակները պարտավոր են իրենց հեղինակային նյութը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին՝ զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, որը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:

6. Հեղինակային նյութն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավորվում է կատարել բոլոր հրատարակչական և նախատպագրական աշխատանքներն իր հաշվին:

6.1. Հրատարակիչն այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջելու Համահեղինակներից կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ հեղինակային նյութի մեջ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով և 2012-ԴՇՀ մրցույթի պայմաններով:

6.2. Համահեղինակները հրատարակչական աշխատանքների ընթացքում նույնպես իրավունք ունեն իրենց հեղինակային նյութի մեջ փոփոխություններ մտցնելու, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի Հրատարակչի ընդհանուր հրատարակչական ծախսերի 10 տոկոսը: Դրանից ավելի մեծ ծախսերի հետ կապված փոփոխությունների հետևանքով Հրատարակչի կորցրած գումարները պահվում են Համահեղինակների հեղինակային վարձատրությունից (ռոյալտի):

7. Համահեղինակները իրավունք ունեն իրենց դիտողությունները հայտնելու Հրատարակչի առաջարկած ձևավորման և նկարազարդման (դիզայն և իլյուստրացիա) վերաբերյալ: Բայց այդ աշխատանքները սկսվելուց հետո, Համահեղինակները իրավունք չունեն պահանջելու ձևավորողի կամ նկարչի փոփոխություն, կամ պետք է իրենց հեղինակային վարձատրության (ռոյալտի) հաշվին փոխհատուցեն այդ փոփոխության պատճառով Հրատարակչի կրած նյութական վնասները:

7.1. Նկարչական և ինյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի կամ երրորդ անձանց տրվելու ենթակա չեն:

8. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո, հեղինակային նյութերի առաջին ընթերցումը կատարում են Համահեղինակները:

8.1. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների մեջ:

9. Գրքերի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն են:

10. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի հեղինակային իրավունքը պատկանում է Համահեղինակներին: Հրատարակիչը իրավունք չունի թարգմանելու, տարածելու դրանք գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով (բացառությամբ տպագրականի)՝ առանց Համահեղինակների գրավոր համաձայնության:

10.1. Սույն պայմանագրի առարկա դասագրքերը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու (ամբողջովին, հատվածաբար կամ թարգմանաբար) իրավունքը այլ հրատարակչություններին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին վաճառքի ընդհանուր գնի 20 տոկոսը:

11. Սույն պայմանագրի առարկա դասագրքերի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակներն իրավունք չունեն տրամադրելու դասագրքերի նյութերը որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:

12. Հեղինակային իրավունքի փոխանցումը սույն պայմանագրի առարկա դասագրքերի նկատմամբ կատարվում է 10 (տասը) տարի ժամկետով:

13. Հեղինակային իրավունքի փոխանցման ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Համահեղինակները պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարեխղճության սկզբունքով:

14. Հեղինակային իրավունքին վերաբերող պայմանավորվածություններից (հոդված 10; 11; 12; իրենց ենթակետերով) յուրաքանչյուրից որևէ մեկը խախտող կողմը պարտավորվում է վճարել տույժ, որի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ վճռում է դատարանը:

## ՄԱՍՆԱՎՈՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, պայմանավորում են համագործակցել 2013–2015 ուսումնական տարիների Հայաստանի հանրակրթական դպրոցի դասագրքերի հրատարակման 2012-ԴՇՀ մրցույթին մասնակցելու մասին:

16. Համագործակցությունն ընդգրկում է հանրակրթական դպրոցի «Հայոց պատմություն 8», «Հայոց պատմություն 9» 8-9-րդ դասարանների դասագրքերի ստեղծումը:

17. Համահեղինակները պարտավորվում են դասագրքերի բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշչին, ուսումնական ծրագրին ու ժամաքանակին:

18. «Հայոց պատմություն 8» դասագրքի 100%-ի, «Հայոց պատմություն 9» դասագրքի 60%-ի վերջնական տարբերակները ԴՇՀ-ի մրցույթին ներկայացնելու համար պետք է հանձնվեն Հրատարակչին մինչև 2012թ. հուլիսի 31-ը:

19. Մրցույթում շահելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Համահեղինակներին «Հայոց պատմություն 8», «Հայոց պատմություն 9» դասագրքերի համար Հրատարակչի վաճառքի գնի քսան (20) տոկոսին համապատասխան գումար (ռոյալտի):

«Հայոց պատմություն 8» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2013թ. հոկտեմբերի 30-ին:

«Հայոց պատմություն 9» դասագրքի հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) Հրատարակիչը Համահեղինակներին կվճարի ոչ ուշ քան 2014թ. հոկտեմբերի 30-ին:

19.1. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

20. Խմբի ղեկավարը հանդիսանում է միաժամանակ դասագրքերի գիտական խմբագիր և նրա վարձատրությունը գիտական խմբագրության համար (ռոյալտի) կազմում է խմբի ընդհանուր հեղինակային վարձատրության (ռոյալտի) 12 (տասներկու) տոկոսը:

21. Հեղինակային վարձատրությունը (ռոյալտի) բաշխումը հեղինակային խմբի անդամների միջև կատարվում է դասագրքերում նրանց հեղինակային նյութի ծավալին համապատասխան՝ խմբի ղեկավարի գրավոր ներկայացմամբ:

22. Մրցույթում հաղթած դասագրքերի հետագա վերահրատարակությունների ժամանակ Հրատարակիչը Համահեղինակներին վճարում է հեղինակային վարձատրություն (ռոյալտի) վերահրատարակման տպաքանակին համապատասխան Հրատարակչի վաճառքի գնի տասը (10) տոկոսի չափով:

22.1. Դասագրքերի վերահրատարակման ժամկետները և տպաքանակը (ելնելով ԴՇՀ-ի պատվերից) որոշում է Հրատարակիչը: Վերահրատարակությունն իրականացնելու

համար Համահեղինակների հատուկ թույլտվություն չի պահանջվում, սակայն Հրատարակիչը պետք է Համահեղինակների հետ քննարկի դասագրքերի հնարավոր մասնակի բարեփոխումների հարցը:

23. Մրցույթի համար պատրաստվող դասագրքերի ցանկացած հատվածի հեղինակային իրավունքը փոխանցվում է Հրատարակչին: Համահեղինակները իրավունք չունեն դասագրքերը ամբողջությամբ կամ մասնակիորեն հանձնելու այլ անձանց:

24. Համահեղինակները ԴՇՀ-ի մրցույթին պատրաստվող և սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերը կազմելիս պարտավորվում են չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ նույն խմբաքանակի համար նախատեսվող դասագրքերի ստեղծման նպատակով:

25. Հեղինակային խմբի անդամների ազգանունները դասագրքերի շապիկի ու տիտղոսաթերթի վրա տրվում են այբբենական կարգով:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ դատական կարգով:

27. Պայմանագիրը կնքված է չորս հավասարազոր օրինակներից, որից մեկ օրինակը պահվում է Կենտրոն նոտարական տարածքում, իսկ մյուս օրինակները տրվում են Կողմերին:

ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Պ. Ա. ԶՈԲԱՆՅԱՆ

Է. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

Ռ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Վ. ՂԱԶԱԽԵԹՅԱՆ

Է. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Է. ՄԻՆԱՍՅԱՆ

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Երկու հազար տասներկու թվականի հունիսի տասնութ
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Նունե Սարգսյանի կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում ի. 3292

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի և Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՏԱՐ Ն. ՍԱՐԳՍՅԱՆ